

# ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

*Posted on December 6, 2020 by Keghart*



Category: [Opinions](#)



## **Յարութեան Տեր Դաւիթեան. Լոս Անճելըս, 6 Դեկտեմբեր 2020**

«Փաթեթային, փուլային եւ այլ տարբերակների շուրջ թուացեալ բանավեճը, վստահ եմ, սոսկ շղարշ է՝ կարգաւորման պրոցեսը (գործընթացը) ձգձգելու, այսօրուայ իրավիճակը, այսինքն ստատուս-քվոն որքան հնարաւոր է երկար պահպանելու համար: **Ես ցաւով նախազգում եմ, թէ դա ինչ ահաւոր վտանգ է ներկայացնում թէ՛ Ղարաբաղի, թէ՛ Հայաստանի գոյութեան համար: Այսօր մենք, ինչպէս Պաթումից ու Ալեքսանդրապոլից առաջ, թերեւս Ղարաբաղի հարցի նպաստաւոր լուծման եւ Հայաստանի բարգաւաճման վերջին պատեհութիւնն ենք կորցնում: Եւ դրա համար մենք բոլորս էլ պատասխան ենք տալու մեր ժողովրդին:» (հատուած՝ նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի ելոյթէն, Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի Ընդլայնուած Նիստին, 8 Յունուար 1998)**

Անոնք, որոնք որեւէ ճգնաժամային վիճակի քննարկման մակարդակը, խորքային լուրջ մօտեցման անհրաժեշտութիւնէն կը փոխադրեն դէպի անձնական անուանարկումներու հարթակ, անոնք վատ ծառայութիւն կը մատուցանեն եւ կը վնասեն տուեալ ճգնաժամէն դուրս գալու ուղիներու որոնման աշխատանքին ու նպատակին: Գետնի իրականութիւնները անտեսողները եւ առաւելագոյնին ձգտողները ճամբան կը հարթեն ապագայի փորձանքներու: Ամբոխավարական զեղումները խնդիր չեն լուծեր, այլ՝ ակեր կը գործեն: Մանրամասնութիւններու վրայ կեդրոնանալով եւ մեր մտասելեռումը մեծ պատկերէն շեղելով, մեզ նորանոր փորձանքներու կ'առաջնորդեն:

1988-ի շարժման ընթացքին, մամուլով թէ հրապարակային ելոյթներով հնչած միտք արծարծող քննարկումները, դժբախտաբար մարեցան Քոչարեան-Սարգսեանական քսանամեայ իշխանութեան տարիներուն: **Արցախի հարցը, փոխանակ անկեղծօրէն քննարկուելու որպէս Հայաստանի պետականութեան ամրապնդման հետ առնչութիւն ունեցող կարեւորագոյն ազդակ, վերածուեցաւ ցեխարձակման միջոցաւ իշխանութիւն զաւթելու եւ անձնական հարստութիւն դիզելու գործօնի, որ հասցուց այսօրուան ճգնաժամին:** Չտեսնել ու չբարձրաձայնել անցած երեսնամեակի թերացումները, կը նշանակէ չտեսնել ճգնաժամէն դուրս գալու արդիւնաւետ ուղիները:

Այս ենթահողէն մեկնելով, փորձենք յստակացնել որոշ իրողութիւններ, սկսելով Լեւոն Տեր Պետրոսեանի վերեւի մեջբերումէն:

- Սարդարապատի փառայեղ յաղթանակէն շաբաթ մը ետք, Յունիս 4, 1918-ին կնքեցինք Պաթումի նուաստացուցիչ դաշնագիրը, որով Հայաստանի հողամասը կը սահմանափակուէր միայն 4400 քառակուսի մղոն տարածութեան մէջ:
- Մայիս 28, 1918-ի անկախութեան հռչակումէն երկու եւ կէս տարի ետք, Դեկտեմբեր 2, 1920-ին կնքեցինք Ալեքսանդրապոլի ամօթալի դաշնագիրը:

Մնալով յօդուածի մը ընձեռած նեղ սահմաններուն մէջ, հարկ կը զգանք հակիրճ

բացառություն մը տալ թէ ինչու՞ այդպես պատահեցաւ, ապա ինչով Հայաստանի Ա. Հանրապետութեան Ա. վարչապետ՝ Յովհաննէս Քաջազնունիի խօսքերուն. «Անհերքելի ճշմարտութիւն է, որ Հայաստանի դրութիւնը եղել է բացառիկօրէն ծանր ու մեր աշխատանքի պայմանները՝ բացառիկօրէն անբարեյաջող: Բայց անհերքելի է եւ այն – անհերքելի է գոնէ ինձ համար – որ սրա վրայ աւելացել է նաեւ մեր սեփական անկարողութիւնը, պետական գործեր վարելու անձեռնհասութիւնը: Եթէ ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, ապա ուրեմն մենք միանգամայն անպետք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հենց այդ նախատեսելու ընդունակութիւնն է, որ չենք ունեցել բնաւ: Մենք շարունակ սխալուած ենք եղել մեր հաշիւների մէջ ու շարունակ անակնկալների հանդիպել, անակնկալների՝ միայն մեզ համար, որովհետեւ չենք գիտեցել նախատեսել: Մեր ամենամեծ թուլութիւնը այդ է եղել: Ապա չենք ունեցել որոշ ու յստակ գիտակցութիւն մեր անելիքի մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տեւողական, հետեւողական սխտեմ, գործել ենք կարծես յանկարծակի ու պատահական ներշնչումների տակ, տատանուել ենք, պատից-պատ ընկել, կէ-կուրօրէն շօշափելով ոտներիս տակի հողը: Չենք ճանաչել ու յաճախ գերազնահատել ենք մեր կարողութեան չափը, չենք հասկացել դժուարութիւնների մեծութիւնը, արհամարհել ենք հակառակ ուժերը եւ թեթեւամտութեան աստիճանի անփոյթ ենք եղել մեզ սպառնացող վտանգների հանդէպ: Կտրուկ ենք եղել այնտեղ, ուր պետք էր ծայրայեղ զգուշութիւն, ու անվճռական այնտեղ, ուր պետք է կտրուկ լինէինք: **Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւն ենք մտցրել պետական կեանքի մէջ: Պետական մարդիկ չէինք մենք»:**

Կարեւոր նկատեցինք այս մէջբերումը ընել, ցոյց տալու համար Քաջազնունիի խօսքերուն այժմեականութիւնը: Պետական մտածողութեան այս ռահվիրայի խօսքերը, օրին որակուեցան որպէս «խենթացած ծերուկի զառանցանքներ», փոխանակ անաչառ ու անկաշկանդ մտքեր եւ ազգասեր սերունդներ դաստիարակելու: Անտեսուեցաւ իր խնդրանքը՝ «շատ խնդրում եմ՝ մի քիչ համբերատար լինեք ու աշխատեք մօտենալ հարցերին անկաշկանդ մտքով, մի բան, որ այնքան էլ հեշտ չէ կուսակցական կեանքով ապրող ու կուսակցականօրէն մտածող մարդկանց համար»: Ինչու՞: Որովհետեւ, ինչպէս ինք կը յայտնէր իր կուսակցական ընկերներուն ուղղուած խօսքին մէջ, **«գործիքը սիրում էք աւելի, քան գործը»:**

Մեր մօտիկ անցեալի պատմութիւնը, թէ՛ Սփիւռքի տարածքին եւ թէ՛ Հայաստանի մէջ (անկախութիւնէն ի վեր) փաստացիօրէն կը հաստատէ, որ եթէ մեր ազգի հատուածները **գործը** սիրէին աւելի քան **գործիքը**, մեզի խնայուած կ'ըլլային շատ մը տազնապներ ու կորսուած առիթներ, եղբայրասպան ոճիրներ, եկեղեցւոյ պառակտում, եւայլն: Փոխարէնը՝ կ'ունենայինք աւելի համերաշխ ու կառուցողական հաւաքականութիւն, աւելի բարգաւաճ Հայաստան ու Սփիւռք, եւ աւելի հզօր պետականութիւն:

**ՂԵՏԱԿԱՆ/ԱԳՂԱՅԻՆ շԱԻՂ ԿՐ ՊՐԻՆԻՍԻ ԿՈՒՍԱԿԵԿԱՆ/ԽԱՏՈՒԼԱԾԱԿԱՆ շԱԻԻ ՍԵՂԱՆԻՆ ԵՒ ԿՐ ՏՈՒԾԵՆՔ ԲՈՂՈՐԱ, ԿՐ ՏՈՒԾԵՆՔ ԱԳՂՈՎԻՆ: ԱՆՀԱԽԱԽՆՆՈՒՄ ՈՒ ԱՆԱՃԱՌ ՄՕՒՆԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ ՄԻՉՏ ԱՎ ՉԵՂՏԱԾ ԵՆՔ ՄԵՐ յՕՂՈՒԼԱԾՆԵՐՈՎ, ԿՐ ԲԱԳԱԿԱՅԻ ԻՐԱՎԱՐԱԿԱՅԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԵՆ, ՈՒՐ ԱՄԲՈՒՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՏԻՐԱՎԵՏՈՂՐ: ԱՆՀԱԽԱԽՆՆՈՒՄ ՈՒ ԱՆԿԱՉԿԱՆՈՒ ՄՏԱԾԵԼԱԿԵՐԱԿԻ ԱՐՈՂԻՆՔ ԷՐ «ՄԱՍԻՍ»Ի ՄԱՅԻՍ 15, 1993-Ի ԹՅՈՒՎ ԻՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐ «ՍԱՐԴԱՐԱՎԱՏ ԵՒ ՊԱԹՈՒՄ, ՔԵԼԲԱՋԱՐ ԵՒ ...» ԽՈՐԱԳՐՈՎ յՕՂՈՒԾՐ, ՈՒՐ ԿՐ ԳՐԵԻՆՔ. «ՍԱՐԴԱՐԱՎԱՏԻ ԲԱՐԾՈՒՆՔԵՆ ՊԱԹՈՒՄԻ ԳԵՏԻՆՆԵՐԸ ԻՉՆՈՂՆԵՐԸ, ԵԹԵ ՎԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎԵՍ ԸՊՈՒԾ ԵՆ ԻՐԵՆԳ ՂԱՍԵՐԸ, ԱՎԱ ԱՌԱՋԻՆ ԽԵՐԹԻՆ ԻՐԵՆՔ ԱԵՏՔ Ե ԳՈՒՍԱՅ ԸՂՎԱՆ ԻՐԵՆԳ ԱՐՏԱՅԱՅՈՒԹԵԱՆՆԵՐ ՄԵՉ, ՎՈՒՍԱՆԱԿ ԱՄԲՈՒՍԱՎԱՐԱԿԱՆ ԵՂՈՅՆԵՐՈՎ ԻՐԱԽՐԵԼՈՒ ԿԻՐՔԵՐԸ: ԱՌԱՋԻՆ ԽԵՐԹԻՆ ԻՐԵՆՔ ԱԿԻՏԻ ԹԵՒ ՈՒ ԹՅԿՈՒՆՔ ԿԱՆԳՆԻՆ ՆԵՐԿԱՅ ԻՉԽԱՆՈՒԹԵԱՆՆԵՐ, ՈՐԱԵՍԳԻ ՄԻԱՍՆԱԲԱՐ, ԱԳՂՈՎԻՆ ԱՐԳԻԼԵՆՔ ՊԱԹՈՒՄԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՈՐԱԵՍԳԻ ՄՍԱՆՔ ՔԵԼԲԱՋԱՐԻ ԲԱՐԾՐՈՒՆՔՆԵՐՈՒՆ: ՈՐԱԵՍԳԻ ՉԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՄԵՐ ՆՈՐՈՐԵՏԱՅ ԱԳԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՅԱՅՐԱՐԻ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹՐ»: ԱՒՂ:**

Այստեղ կ'արժե նաեւ մեջբերել սպարապետ Վազգէն Սարգսեանի հետեւեալ խօսքը. «Ես վախենում եմ մեր հասարակութեան այսօրուայ անտարբերութիւնից՝ հնարաւոր ռազմաքաղաքական բարդութիւնների նկատմամբ: Սթափուել է պետք, առջեւում ծանր անակնկալներ կան: Ես վախենում եմ ընդդիմութեան ատելութիւնից՝ բանակի նկատմամբ: Սթափուել է պետք, դա նաեւ ձեր ու ձեր երեխաների պաշտպան բանակն է: Ես վախենում եմ իշխանութիւնների թուլացող ուշադրութիւնից՝ բանակաշինութեան նկատմամբ: Սթափուել է պետք, պատերազմը դեռ չի աւարտուել: **Վերջապես ես վախենում եմ բոլոր չվախեցողներից՝ անտարբերներից, արկածախնդիրներից, ժողովրդի բոլոր հնարաւոր «փրկիչներից»:**»:

Այստեղ կ'արժե նաեւ մեջբերել սպարապետ Վազգէն Սարգսեանի հետեւեալ խօսքը. «Ես վախենում եմ մեր հասարակութեան այսօրուայ անտարբերութիւնից՝ հնարաւոր ռազմաքաղաքական բարդութիւնների նկատմամբ: Սթափուել է պետք, առջեւում ծանր անակնկալներ կան: Ես վախենում եմ ընդդիմութեան ատելութիւնից՝ բանակի նկատմամբ: Սթափուել է պետք, դա նաեւ ձեր ու ձեր երեխաների պաշտպան բանակն է: Ես վախենում եմ իշխանութիւնների թուլացող ուշադրութիւնից՝ բանակաշինութեան նկատմամբ: Սթափուել է պետք, պատերազմը դեռ չի աւարտուել: **Վերջապես ես վախենում եմ բոլոր չվախեցողներից՝ անտարբերներից, արկածախնդիրներից, ժողովրդի բոլոր հնարաւոր «փրկիչներից»:**»:

Նոյեմբեր 10, 2020-Էն ետք ունիւնք ինչ որ ունիւնք: Որ աւելի քիչ է, քան այն, որ ունեիւնք, երբ Փետրուար 20, 1988-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ղեկավարութիւնը դիմում ներկայացուց տարածքը Ազրպէյճանէն փոխանցելու Հայաստանին: Անկէ ետք ականատես եղանք շլացուցիչ զարգացումներու շարանի մը: Խորհրդային Միութեան փլուզման եւ բաղկացուցիչ հանրապետութիւններու անկախացման, ներառեալ Հայաստանի: Արցախեան պատերազմի բռնկման, որ սկզբնական շրջանի անյաջողութիւնէ ետք, պսակուեցաւ փառայեղ յաղթանակով, ԼՂԻՄ-ը շրջապատող եօթը տարածքներու ազատագրումով եւ Արցախի անկախութեամբ: Միջազգային հանրութիւնը հաշտ աչքով չդիտեց մեր նուաճումները եւ բանաձեւերու քուէարկութեամբ պահանջեց մեզմէ այդ տարածքներու վերադարձուիլը Ազրպէյճանին: Մենք, գիտովցած մեր յաջողութիւններով, սկսանք ճառել Նախիջեւանի, Ջալախքի, մինչեւ իսկ Արեւմտեան Հայաստանի ազատագրումէն: Երբ զգաստութեան կոչեր հնչեցին մեր յաղթանակը կերտողներուն կողմէ, զանոնք դաւաճան որակեցինք, մեկուն հրաժարեցուցինք, միւսին ալ սպաննեցինք: Արցախը բանակցութիւններու սեղանէն դուրս հանեցինք եւ Հայաստանը «գոյք պարտքի դիմաց» ծախեցինք ու մնացեալն ալ

թախանցիկը: Թշնամիին պատերազմի պատրաստությանը դիմաց մենք անձնական դղեակներ կառուցեցինք ու մեր յաղթանակներու եւ հաւաքական ապահովութեան երաշխիք բանակի սպառազինումը անտեսեցինք: Մեր պաշտպանութիւնը վստահեցանք անոր, որուն ծախսեցինք Հայաստանը, հակառակ անոր, որ ան ալ մեզ կը ստիպէր վերադարձնել տարածքները: Ու յաղթանակ կերտողին նախազգացումը իրականացաւ: «Ոչ մի թիզ»ի տեղ, զիջեցինք 90-ականներու առաջին կեսի մեր նուաճումները եւ աւելին: Իրականացաւ նաեւ սպարապետ Վազգէն Սարգսեանի մտավախութիւնը՝ «Հայ ժողովուրդը վերջին 7-8 տարիներին համազգային սխրանք է գործել, եւ անչափ ցաւալի, ճակատագրական կը լինի, եթէ թիրիւմացութիւնների, անվստահութեան, անմիաբանութեան պատճառով յանկարծ տանուլ տանք արիւնով ու մաքառումներով ձեռքբերուածը»:

Մեր այս խորհրդածութեանց տուիւնք «Արցախի Հարցը եւ Հայաստանի Պետականութիւնը» խորագիրը, անգամի մը համար եւս շեշտելու այս երկուքին անքակտելիութիւնը: Շեշտելու՝ որ Արցախի հարցը պէտք չէ՛ շահագործուի Հայաստանի մէջ իշխանութեան տիրանալու համար, որ կը վնասէ Հայաստանի պետականութեան ամրակայման: 90-ականներու համազգային սխրալի նուաճումներէն ու՞ր հասանք: Կրկնուեցաւ Սարդարապատի յաղթանակէն Պաթումի պարտութիւնը, Մայիս 28-ի անկախութեան հռչակումէն Դեկտեմբեր 2-ի հպատակեցումը: Արցախի հարցի կապակցութեամբ, անկախ հանրապետութիւնէն նահանջած ենք «Վոլսկիի տարբերակ»ին: Հայաստանի պետականութեան կապակցութեամբ, առայժմ զբաղուած ենք դաւաճաններու փնտռտուքով:

Բայց յոռետես չենք:

(Շարունակելի)

**There are no comments yet.**